Երևանի «Հրաչյա Աճառյան»
համալսարանի Հայկական հարցի
գիտական կենտրոն
Մատենաշար, թիվ 1

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Հայկական հարցի միջազգայնացման 120-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր (6-ը և 23-24-ը նոյեմբերի 1998թ.)

Երևան 2000

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄՅԱՆ
Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԿԱՐԻՆԻ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԱՄՓՈՎ

Հայ քաղաքական միտքը զարգացման ընթացքի մեջ էր արդեն 1860-ական թվականներին, իսկ այդ զարգացման հիմքում՝ հայ ժողովրդի ազատագրումն էր թուրքական բռնակալ լուծից՝ նպատակ, որ պիտի յուրացվեր հասունացած քաղաքական մտքի՝ հայ կուսակցությունների կողմից: Եթե անվիճելի նպատակակետ էր այդ տեսլականը, նույնը չէին, սակայն, կարծիքներն ու համոզումները՝ թե ո՞րն է այդ տեսլականի իրացմանը տանող ճշգրիտ ճամփան:

Մեծ էր թիվը նրանց, որոնք հավատում էին, թե պիտի վստահել Օսմանյան կառավարությանը, հայցել եվրոպական պետությունների միջամտությունը Բ. Դռան մոտ և խուսափել այն քայլերից, որոնք կարող են գրգռել կառավարությանը: Երկրորդ խումբը, ավելի արմատական միջոցը հեղափոխությունն էր համարում՝ զանգվածներին ոտքի հանել, ցույցեր կազմակերպել, հայ ժողովրդի իրավունքները պաշտպանել: Երրորդը՝ առաջ էր քաշում լուսավորչական կրթական շարժման ժավալման խնդիրը:

Այս տարազան համոզումները արձագանք էին գտել Էրզրումի հայ քաղաքական մտքի ոլորտում:

Էրզրումցի մտավորական-քաղաքական գործիչների մեջ ավելի մեծ արձագանք է գտել երրորդ ուղղությունը, որի ապացույցը Կրթական ընկերության կազմությունն է 1876-ին, բայց նույնիսկ լուսավորության տարածման նրա համեստ նպատակը կառավարության կասկածը շարժեց, և ընկերությունը արգելափակվեց:[1]

Կազմվեց երկրագործական ընկերության վարչությունը, որ ծրագրում էր Կարին քաղաքին մոտիկ հսկա հողամաս գտնել, հողագործական նոր մեքենաներով ու նոր ձևերով գյուղացիներին ներգրավել, աշխատել նրանց հետ ու այդ ճամփով դեպի քաղաքական նպատակներ առաջանալ: Կառավարությունը խափանեց այն ու սպառնաց նախաձեռնողներին:[2]

Էրզրումի հայի քաղաքական մտքի զարգացման ճամփին ու հետագա ազատագրական պայքարի ձևավորման տեսակետից անկյունադարձ էր 1877-1878-ի ռուս-թուրքական պատերազմը, իսկ այդ անկյունադարձի կարևոր հիմքերից էր ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին ու ընթացքում օսմանյան կառավարության արտոնած՝ հայերի կոտորածը քրդերի ձեռքով: Տիրող սարսափի, ջարդի ու հալածանքի մթնոլորտում բնական պիտի սեպել Էրզրումի հայության զրկաբաց ու խանդավառ ընդունելությունը՝ ռուս հաղթական բանակի: «Armenia and the Campaigne of 1877» աշխատության մեջ Նորմանը գրում է, թե կառավարության այս

քաղաքականությունը պատճառ դարձավ, որ հայերը, վռխանակ թիկունք կանգնեն կառավարության՝ դեմ դնելու մոսկովյան զավթիչներին, երախտապարտությամբ դեպի նրանց դարձավ:[3] Հայերը ոգևորությամբ ընդունեցին ռուսների մուտքը Էրզրում, բայց դա հակառակ խոր-հրդահայ պատմագրության մեջ շեշտադրված ենթատեքստի, ռուսասիրությունից չէր բխում, այլ այն հնարավորությունից, որ քաղաքական նոր կացությունն էր հայության համար դեպի դրսի աշխարհ բացվելու, չարչաչանքից ու հալածանքից ճողոպրելու: Ռուսաստանը Արևմտահայաստանի ինքնավարության ծրագիրն առաջ քաշեց. ծրագիր, որ որդեգրել էր Ցարը, ծրագիր, որին իր համաձայնությունն էր տվել նաև սուլթանը, նպատակ ունենալով ինքնավար Հայաստանով ստեղծելու Ռուսաստանի հարձակումների դեմ ապահովության գոտի:

Ռուս բանակի ամիսների կեցությունը Էրզրումում իր անդառնալի հետքը թողեց նահանգի հայ բնակչության, մանավանդ քաղաքական մտքի զարգացման տեսակետից, Էրզրումցի հայ մարդ շփվեց ռուս բանակի հայ բարձրաստիճան սպաների, Լորիս-Մելիքովի, Լազարևի, Տեր-Ղուկասյանի ու մյուսների հետ, լսեց նրանց խրախուսանքը ոտքի ելնելու, հայ ժողովրդի իրավունքները պաշտպանելու, հպարտությամբ հետևեց նրանց գործունեության, ակնածանքով դիտեց Կամսարականին, իբրև Կարին քաղաքի ոստիկանապետ, վայելեց Ծերենցի ներկայությունն ու յուրացրեց նրա քաղաքական առաջադրանքները: Կազմվեցին ընկերություններ՝ Մամիկոնյանց, Ղևոնդյանց, Բարձր Հայոց Ընկերություն. գործել սկսեց թատերական ընկերությունը, որ Դուրյանի ու Պեշիկթաշլյանի թատերգությունների ընդմիջից հայրենասիրություն էր քարոզում, Էրզրումցի հային դեպի գործ էր մղում:[4]

Ռուս բանակի հեռացումը 1878-ի օգոստոսին, հանկարծակի հարված էր Էրզրումի հայության համար: Ու նոր կոտորածների սարսափից՝ բանակի հետևից գաղթի ճամփան բռնեց: Այս գաղթին դեմ էր թե արևմտահայ և թե ռուսահայ գործիչներն, այն որակելով «քաղաքական ինքնասպանություն»:[5]

1881-ի մայիսին 6 Էրզրումցի երիտասարդներ՝ Խաչատուր Կերեկցյան, Կարապետ Նշկյան, Հակոբ Իշգալացյան, Ալեքսան Եթելիկյան, Հովհաննես Ասատուրյան և Եղիշե Տուրսունյան, իրար շուրջ գալով կազմեցին Էրզրումի առաջին հեղափոխական ընկերությունը, որ «Պաշտպան հայրենյաց» կոչվեց (որոշ աղբյուրներում նույն ընկերությունը «Գաղտնի ընկերություն Բարձր Հայոց» է հիշված):[6] Ընկերության նպատակն էր զինել ժողովրդին ու նրանց ինքնապաշտպանության մղել: Հակոբ Նշկյանի վկայությամբ, Էրզրումի հոգևոր առաջնորդ Մաղաքիա սրբ. Օրմանյանը տեղյակ էր այս ընկերության մասին և յուր համաձայնությունն էր տվել, նրա գործունեությանը քաջալերում էին Վանի առաջնորդ Խրիմյան Հայրիկը և Պոլսո պատրիարք Ներսես Վարժապետյանը: Ըստ

Նշկյանի, կարճ ժամանակում մեծ տարածում գտավ ընկերությունը՝ գաղտնի գործող տասնոց զինյալ խմբերով:

Գաղտնի ընկերությունը գաղտնի չմնաց, ու հայ լրտեսներն էլ օգնեցին դրան: 1882-ի նոյեմբերի զանգվածային ձերբակալություններն ու բանտարկությունը վերջ տվեցին կազմակերպությանը, նրա արձագանքը տարածվեց: Նրա անդամները դատապարտվեցին «հեղափոխական միջոցներով Էրզրումը Օսմանյան կայսրությունից անջատել» փորձելու մեղադրանքով: Դատավարությունը լայն արձագանք ունեցավ:

Օսմանյան կառավարության արագ ու խստաբարո հակազդեցությունը որոշ ժամանակի համար խափանեց քաղաքական-հեղափոխական գործունեությունը Էրզրումում, բայց միևնույն ժամանակ առաջացրեց անհրաժեշտություն՝ ավելի լավ կազմակերպվելու:

1883-1890-ը Էրզրումի հայության համար ինքնաճանաչումի ու ինքնաղաստիարակման շրջան էր, նաև՝ մտքերի բյուրեղացման ու ազատագրական պայքարի մտնելու վճռականության ձևավորման:

Էրզրումում առաջին հեղափոխական-կուսակցական խմբակը «Դրոշակ» կոմիտեն էր, որ Օկոյանը կազմեց՝ որպես մեկ ճյուղը 1889-ին Թիֆլիսում ստեղծված Դրոշակ խմբակցության:

ՀՀ դաշնակցության կազմությունից անմիջապես հետո էր, որ Քեռին ու Արամ Արամյանը (Թաթուլ) իրենց ծննդավայր Էրզրում ուղարկվեցին հեղափոխական բջիջներ կազմելու համար: Հայության և օսմանյան իշխանությունների առճակատման նշանակալից երևույթ էին Կարին 1890թ. հունիսի իրադարձությունները:

Կառավարությունը իբրև թե լուր էր ստացել, թե հայերը մեծ քանակությամբ զենք ու զինամթերք են ամբարել քաղաքի եկեղեցում, Առաջնորդարանում ու Սանասարյան վարժարանում: Ոստիկանությունն ու բանակը խուժելով այդ վայրերը, սկսեցին խուզարկել ամենայն վայրագությամբ՝ արհամարհելով ու պղծելով մանավանդ եկեղեցու սրբությունները: Կիրակնօրյա պատարագին մասնակցող ժողովուրդը ընդվզեց ու ճակատումը սկսեց կրակոցներով: Կարծես նախապես կարգադրված, թուրք ու քուրդ ամբոխն էլ միացավ ու սկսվեցին ջարդն ու թալանը փողոցներում: Երեք ժամ տևող ճակատ-ճակատի կռվում զոհվեցին շուրջ հարյուր հայեր, վիրավորվեցին 2-300-ը: Կատարվեցին ձեռբակալություններ, ու քաղաքը պաշարման ու ոստիկանության տարածած սարսափի տակ մնաց մի քանի շաբաթ: Դաշնակցական գրականության մեջ դեպքը ներկայացված է իբրև ժողովրդային ինքնաբուխ ընդվզում, որի ղեկը ձեռք էր առել Վարդգես Սերենգուլյանը, իսկ Հնչակյան աղբյուրները այն վերագրում են Տրապիզոնի հնչակյան մարմնի և Էրզրումի Հնչակյան խմբակի գործունեությանը:

Ժողովրդային այս ընդվզումի արձագանքը տարածվեց ամեն կողմ, եվրոպական թերթերը գրեցին ու թղթակիցներ ուղարկվեցին Էրզրում: Որ-

քան էլ համեստ էր ըմբոստ արարքը, հայ իրականության մեջ չափազանցված ոգևորությամբ ու հուզականությամբ ընդունվեց ու տարածվեց այն: Դեպքին նվիրվեց «Ձայն մը հնչեց Էրզրումի Հայոց լեռներեն» երգը:

Էրզրումի դեպքին հաջորդեցին անհատ ֆիդայիների կազմակերպած ինքնապաշտպանության նախաձեռնությունները: Օրինակներն են՝ Գալուստ Արխանյանի ու Դերսիմի Քեռու խմբերը, որոնք որոշ ժամանակ գործեցին Երզնկայում:

1890-95 շրջանը կարելի է հատկանշել «Սուրբ գործին» ամբողջական նվիրումով, հուզականությամբ, անիրականացնելի ծրագրերով ու անիրապաշտ ակնկալիքներով, գաղափարական վեճերով, միջկուսակցական բախումներով: Ժամանակաշրջանը ցուցաբերեց զանգվածների անպատրաստվածությունն ու չկամությունը ինքնապաշտպանության և դիմակայելու, հարուստների դժկամությունը՝ ազատագրական պայքարը ֆինանսավորելու, նպատակադրումներ, որոնք բյուրեղացած չէին դեռ հայ մարդու համար: Վերջապես, ինչ էր բուն նպատակը ազատագրական պայքարի. ազատություն ինչի՞: Գուցե ազատությունը Էրզրումցի հայի համար ծանր ու ապօրինի հարկերից ազատվելն էր, գուցե իրավունքը՝ Ռուսաստան գաղթելու:

Այս շրջանի հեղափոխական գործունեությունը դժբախտաբար զուգորդված էր մանավանդ հնչակյանների՝ Օսմանյան կառավարությանն ուղղած անհիմն սպառնալիքների ու ճոռոմ հայտարարությունների հետ, որոնք փակցվում էին գյուղի ու քաղաքի պատերին, սովորական թուրքի աչքերի առջև: Ու կառավարությունը օգտագործում էր դա՝ թուրքին հայերի դեմ լարելու. ինչ փույթ, որ ինքն էլ գիտեր, թե հայերից վախ չկա և, ինչպես պատվելի Էդվին Բլիսն է վկայում, հազարից մեկ հայի մոտ զենք կգտնվեր, մինչդեռ թուրքերը զինված էին մեծ չափերով:[7]

Կարճ է տարածությունը ծայր աստիճան ոգևորությունից մինչև հուսալքում, մանավանդ, երբ գործողությունները սոսկալի վնասներ էին պատճառում, իսկ կառավարությունը հակազդում էր՝ պատժելով ոչ թե միայն գործողության մասնակիցներին, այլ ամբողջ համայնքին՝ կին, տղամարդ, երեխա: Այդ հուսալքումի վրա ավելացան 1894-96-ի համատարած ջարդերը: 1895-ի հոկտեմբեր 30-ին կոտորածների ալիքը Տրապիզոնից անցավ Գյումուշհանե, Բայբուրդ և հասավ Էրզրում: Տարօրինակ է թվում, թե ինչպես Էրզրում քաղաքում, ուր հաստատված էին ռուս, անգլիացի ու ֆրանսիացի հյուպատոսները և ամերիկյան ավետարանչական կենտրոնը, տեղի ունեցան թալան, ջարդ ու կոտորած, երեք օչ շարունակ և անկաշկանդ: Շատ են վկայությունները ջարդերի մասին. Ռոստոմը , որ Էրզրումում էր գտնվում զենքերի փոխադրման ու ցրմանը վերահսկելու համար, ականատեսի իր փորձառությունն է պատմում:[8] Ինչպես անգլիական դեսպանին հղած Էրզրումի հյուպատոսի զեկույցում է նշված և ինչպես պատվելի Չամբրզի ականատեսի զեկույցի հիման վրա Էդվին

Բլիսն է եզրակացնում[9] և Ռոստոմն էլ է նշում՝ զանազան իսլամ ցեղերից բաղկացած, դրսերից հատկապես եկած բաշիբոզուկների մասնակցությունը կարևոր էր ջարդերն ու թալանը ի կատար ածելու մեջ, բայց ավելի ճամփա էր բացում ամբոխի համար: Բոլոր աղբյուրները վկայում են, թե որևէ ինքնապաշտպանական գործողություն, մի կրակոց բավական էր այդ խառնամբոխին վանելու համար, բայց բանակը միջամտում ու պատժում էր պաշտպանվել համարձակվողներին:

Ջարդն ու կոտորածը ավելի խորացրին անկազմակերպությունն ու հուսալքությունը. նախ՝ պատասխանատուները չպատժվեցին, ընդհակառակը՝ տեղական իշխանությունները ստիպեցին ստորագրել խոստովանագրեր, ուր կոտորածի պատասխանատվությունը հայերը իրենց վրա էին վերցնում, իբրև թե իրենք են առաջացրել գրգռությունները:[10] Երկրորդ՝ հեղափոխությունը չէր կարողացել հայ զանգվածներին շարժել, նրանց ընդհանուր ապստամբության մղել, և հայերը կոտորվել էին առանց զգալի դիմադրության: Երրորդ՝ ոչ միայն եվրոպացի դիտորդները, այլև հայ պահպանողական ղեկավարությունը ջարդերի համար հայ հեղափոխական շարժումն էին մեղադրում: Այսպես, օրինակ, Բլիսը հնչակյանների գործունեությունը քննադատելով, եզրակացնում էր, թե Էրզրումում, Խարբերդում ու Դիարբեքիրում տեղի ունեցած ջարդն ու կոտորածը չեն կարող նվազագույն չափով անգամ արդարացվել հայ հեղափոխական շարժման պատճառաբանությամբ:[11] Նույն մեկնաբանությունն է տալիս նաև Ֆրեդրիք Գրինը, որը հայ հեղափոխական շարժումը համարում է բնական հետևանքը Բեռլինի վեհաժողովից հետո Հայաստանում ստեղծված սոսկալի իրավիճակի:[12] Չորրորդ՝ կոտորածները բացահայտեցին եվրոպական պետությունների անկարողությունը կամ չկամությունը միջամտելու և ջարդը կասեցնելու:

Էրզրումը մշակույթային, քաղաքական և տնտեսական կյանքը կարճատև վերելք ապրեց երիտթուրքերի հեղաշրջումից ու սահմանադրության վերահաստատումից հետո մինչև Ա. Աշխարհամարտ, մանավանդ՝ 1910-14 թվերին, երբ Ռոստոմը Կարին էր վերադարձել որպես Հ.Յ.Դ. բյուրոյի ներկայացուցիչ, քաղաքական գործիչ, ազգային դպրոցների ուսուցիչ ու վերատեսուչ: Էրզրումը վերածվել էր Դաշնակցության գործունեության կարևոր կենտրոններից մեկի: Դա անհանգստացրեց Սանասարյան վարժարանի ղեկավարությանը: Վարժարանը 1913-ին փակվեցև տեղավորվեց Սեբաստիա: Ռոստոմի ջանքերով և Ամերիկայում կազմված Կարնո ուսումնասիրաց Միության նյութական օգնությամբ նոր Սանասարյան դպրոցը իր դռները բացեց նույն աշնան:[12]

Եռանդ կար, գործունեություն, քաղաքական մամուլ, կազմակերպություններ, հույս ապագայի ու միաժամանակ, տարվում էր նաև ինքնապաշտպանության զինավարժությունը՝ Փիլոսը Էրզրում քաղաքում, Դրոն՝ Բայազետում: Դաշնակցության 8-րդ ընդհանուր ժողովն էլ Էրզրումում

գումարվեց 1914-ի ամռան: Թուրքերի վերաբերմունքը ավելի թշնամական էր դարձել: Թուրքիան պատրաստվում էր դաշնակիցների դեմ պատերազմի մեջ մտնել, իսկ հայերը կարևոր ազդակ էին երկրում կամ ավելի ճիշտ կարևոր արգելք: Նման չարագուշակ պայմաններում էր, որ ծավալվեց խոչընդոտները իսպառ վերացնելու կառավարության որդեգրած քաղաքականությունը, իսկ այդ խոչընդոտների շարքին՝ բնաջնջում Օսմանյան կայսրության հայ բնակչության:

Ծանոթագրություններ

1. Այստեղ չեմ հիշատակել Խաչատուր Կերեկեյանի 1874-ին հիմնած ու շատ կարճատև կյանք ունեցած Ազատություն Հայրենասիրական Միությունը, որի մասին հիշատակում կա Ռ. Փ. Հովհաննիսյանի ,,Արևելահայ Ազգային Ազատագրական շարժումները և ,,Կարինի ,,Պաշտպան Հայրենյաց,, կազմակերպությունը ,, աշխատության մեջ (1965, Երևան, էջ 88) :
2. Հ. Մ. Նշկյան ,,Առաջին կայծեր, էջ մը Կարնոյ Զարթօնքին,, 1930, Բոստոն, էջ 26-30:
3. C. B. Normann, Armenia and the Campaighne of 1877 (London , p 137).
4. Գյուլխանդանյան Ա., Յեղափոխական շարժումը Կարինի մէջ 1939, Բոստոն, էջ 122-132:
5. Նույն տեղում, էջ 123:
6. Նշկյան Հ. , նշվ. աշխատ., էջ 115-146:
7. Էդվին Բլիս, Turkey and Armenian Atrocities. London – New-York, 1896, Frezno 1982, p. 556:
8. ,,Ռոստոմ,, 1979,Բեյրութ, էջ 50-54:
9. Բլիս, էջ 416-426:
10. Յոհաննես Լեփսիուս, Armenia and Europe. London , 1898, p. 63.
11. Բլիս, էջ 557-558;
12. Գրին, էջ 69: